ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 27-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր Ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Կ. Լ. Դալլաքյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հ. Մ. Թաղդասարյանը, հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Թ. Սվեալովան:

Ժողովը բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Հանրապետության գիտական հասարակայնությունը, ասաց նա, այս մեկ տարում ծանր կորուստներ կրեց. վախճանվեցին ականավոր գիտնականներ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ է. Հ. Հարությունյանը, Գ. Գ. Սնակը, Հ. Գ. Մաղաքյանը, Գ. Հ. Բաբաջանյանը, Լ. Ս. Խաչիկյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Ս. Շահինյանը: Ժողովի մասնակիցները հոտնկայս հարգեցին նրանց հիշատակը:

Այնուհետև Վ. Համբարձումյանը նշեց, որ անցած տարի հանրապետության ակադեմիայի գիտական և գիտակազմակերպչական գործունեության գլխավոր նպատակն էր ժողովրդական տնտեսության զարգացման 11-րդ հնգամյակի առաջին տարվա պլանից և հետագա հեռանկարներից բխող խնդիրների իրագործումը: Գիտությունների ակադեմիայի գիտական հիմնարկների և մյուս ստորաբաժանումների կոլեկտիվների աշխատանքի մակարդակի հետագա բարձրացման համար չափազանց կարևոր նշանակություն ունեցան ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարների, ինչպես և կուսակցության և կառավարության որոշումներում բովանդակվող դրույթներն ու հետևությունները: Ելնելով գիտության առջև դրված այդ կարևորագույն խնդիրներից, ակադեմիայի կազմակերպությունները մշակեցին գիտահետազոտական աշխատանքների պլաններ, ճշգրտեցին իրենց հետազոտությունների հիմնական ուղղությունները: Ժողովրդական տնտեսության հետագա զարգացման շահերը պահանջում են գիտական մշակումների բարձր մակարդակ և որակ, ներդրման արագացում: Այդ ուղղությամբ զգալի քայլեր են արվել. ավարտվել են մի շարք արժեքավոր գիտական աշխատանքներ, արտադրության մեջ ներդրվել են ճշգրիտ սարքեր, կոնստրուկցիաներ, ավտոմատիկայի, էլեկտրոնիկայի միջոցներ, քիմիական նյութեր և այլն: Այնուհետև Վ. Համբարձումյանը հանգամանորեն խոսեց ակադեմիայի բաժանմունքների գիտական ստորաբաժանումներում կատարվող աշխատանքների, ձեռք բերված խոշոր նվաճումների և դրանցից յուրաքանչյուրի առջև ծառացած խնդիրների մասին: Նա ընդգծեց, որ հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման արդի փուլում արտադրության հետ գիտության կապի ամրապնդումն առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում: ՍՄԿԿ XXVI համագումարը գիտնականների առջև խնդիր դրեց ամենամեծ գիտության ջանքերը տեսական պրոբլեմների մշակմանը զուգընթաց մեծապես կենտրոնացնել ժողովրդատնտեսական հանգուցային հարցերի լուծման վրա: Վ. Համբարձումյանն անդրադարձավ նաև միութենական հանրապետությունների և սոցիալիստական երկրների գիտությունների ակադեմիաների հետ ՀՍՍՀ ԳԱ կապերին:

Ի մի բերելով գիտությունների ակադեմիայի գործունեության արդյունքները, Վ. Համբարձումյանն ընդգծեց գիտության համակողմանի զարգացման նկատմամբ Հայաստանի կոմկուսի կենտկոմի և հանրապետության կառավարության հսկայական հոգատարությունը: Նա միաժամանակ հավաստիացրեց, որ ակադեմիայի գիտական հիմնարկների կոլեկտիվներն իրենց ջանքերը նպատակամղում են մեր հայրենիքի հզորության հետագա ամրապնդման ուղղությամբ ՍՄԿԿ XXVI համագումարի առաջադրած խնդիրների իրականացմանը:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի 1981 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը: Նշելով ակադեմիայի բաժանմունքների ինստիտուտների ձեռք բերած հաջողությունները, նա ասաց, որ գիտական բոլոր աշխատողների

ջանքերը կենտրոնացված են եղել հիմնարար գիտությունների նոր ուղղությունների հետագա զարգացման, հետազոտությունների որակի և արդյունավետության բարձրացման, ժողովրդական տնտեսության համար հրատապ նշանակություն ունեցող գիտական պրոբլեմների մշակման ուղղությամբ ՍՄԿԿ XXVI և Հայաստանի կոմկուսի XXVII համագումարների որոշումների կատարման վրա։ Հաշվետու տարում հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնարկներում գիտահետազոտական աշխատանքներ են տարվել 533 թեմաների գծով։ Տարեկան պլանը հիմնական ցուցանիշներով հաջողությամբ կատարվել է։

Գիտությունների ակադեմիայի գործունեությունը, շարունակեց զեկուցողը, մշտապես գտնվում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում։ Մեծ օգնություն էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի որոշումը ակադեմիայի ֆիզիկատեխնիկական գիտությունների ու մեխանիկայի բաժանմունքի աշխատանքի մասին և հանրապետության Մինիստրների խորհրդի որոշումը գիտությունների ակադեմիայի քիմիական գիտությունների բաժանմունքի գործունեության մասին։ Այդ որոշումներում նշվել են վերոհիշյալ բաժանմունքների գրական գործունեությունը, ձեռք բերված հաջողությունները, միաժամանակ ընդգծվել են դրանց աշխատանքներում նկատված լուրջ թերությունները։ Ակադեմիայի նախագահությունը, վերջերս քննարկելով Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և հանրապետության Մինիստրների խորհրդի նշված որոշումները, ընդգծեց, որ այդ թերությունները հավասարապես վերաբերում են նաև մյուս բաժանմունքներին և դրանց ինստիտուտներին։ Նախագահությունը միջոցներ է ձեռնարկում առկա թերությունները վերացնելու համար։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի վերջերս կայացած պլենումում Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը իր ճառում նշեց նաև գիտական հիմնարկների աշխատանքում տեղ գտած թերություններն ու սխալները։ Պլենումը պահանջեց վճռական միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու համար։ Այդ քննադատական դիտողությունները, առաջադրված հարցերը, ասաց Գ. Գալոյանը, դարձել են ակադեմիայի գիտական ստորաբաժանումների կոլեկտիվների լուրջ վերլուծության թեմա և կոնկրետ միջոցներ են մշակվում բացերը վերացնելու համար։

Վերջում զեկուցողն ասաց, որ ինչպես ակադեմիայի ընդհանուր ժողովը, այնպես էլ այս օրերին նրա բաժանմունքներում տեղի ունեցած տարեկան ժողովները կարևոր պրոբլեմներ առաջադրեցին։ Դրանք գիտաշխատողների ջանքերը մոբիլիզացնում են ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարների որոշումների անշեղ կատարման համար։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում զեկուցումների շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին քիմիական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Նալբանդյանը, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի դիրեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ա. Ց. Ամատունին, ֆիզիկատեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Տ. Աղոնցը, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Է. Բ. Աղայանը, Գ. Ա. Գալոյանը։

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովում տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պարգևների հանձնման ամենամյա հանդիսավոր արարողություն։

Գիտական բեղմնավոր գործունեության համար «Մեծարման գրի» արժանացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Մ. Ք. Զայլախյանը և Ս. Ա. Համբարձումյանը։ Գիտության զարգացման ասպարեզում ներդրած մեծ ավանդի համար «Վաստակագիր» ստացան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Մ. Ղարիբյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Լ. Մ. Ջանփոլադյանը, Վ. Ս. Նալբանդյանը, Ա. Մ. Գասպարյանը։ Գիտահետազոտական հաջող գործունեության համար մի մեծ խումբ գիտնականների հանձնվեց «Գովեստագիր»։

ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովի եզրափակիչ նիստում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտներ ընտրվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ղ. Խոսիֆյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը, Վ. Բ. Ֆանարջյանը։

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 22-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Այն բացեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը։ Ժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հոտնկայս

հարգեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, բաժանմունքի բյուրոյի անդամ, ճանաչված հայագետ Լ. Ս. Խաչիկյանի հիշատակը։

Հանդես գալով բաժանմունքի գիտական հիմնարկների 1981 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով, Գ. Ղարիբջանյանը նախ նշեց, որ բաժանմունքը համալրվել է նոր անդամներով. ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս է ընտրվել Գ. Ա. Գալոյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ՝ Վ. Ե. Խոջաբեկյանը։ Այնուհետև զեկուցողն ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքի գիտական հիմնարկները, ղեկավարվելով ՍՄԿԿ XXVI համագումարի պատմական որոշումներով, դգալի աշխատանք են կատարել կենսագործելու համագումարի, ՍՄԿԿ և ՀԿԿ կենտկոմների համապատասխան պլենումների և վերադաս մարմինների որոշումները, որոնք ընդունվել են գիտության զարգացման նպատակով։ Մեծապես բարձրացել են ինստիտուտների գիտական հետազոտությունների մակարդակը, գիտահետազոտական մշակումների արդյունավետությունն ու որակը։ 1981 թ. բաժանմունքի ինստիտուտները հրատարակել են 30 անուն մենագրություն և ժողովածու։ Ապա Գ. Ղարիբջանյանը հանգամանորեն անդրադարձավ բաժանմունքի հիմնարկների՝ տնտեսագիտության, պատմության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության, հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի, բաժանմունքի և բաժանմունքի բյուրոյի, գիտական խորհուրդների, կոորդինացիոն գիտական խորհուրդների գործունեությանը, խոսեց գիտական նստաշրջանների և կոնֆերանսների, գիտական գործուղումների, «Գիտելիք» ընկերության գծով տարվող աշխատանքների, բաժանմունքի հիմնարկներում կատարված կառուցվածքային փոփոխությունների, պարբերատումների մասին, նշեց ձեռք բերված որոշակի հաջողությունները, տեղ գտած թերությունները, լուծում պահանջող հրատապ հարցերը։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Խ. Սարգսյանը, աշխարհագրական գիտությունների դոկտոր Լ. Հ. Վալեսյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1981 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և հանդես եկան մի շարք առաջարկություններով ստեղծել հայկական գիտատեխնիկական ընկերություն, հանրապետությունում կազմակերպել ոռոգատեխնիկայի արտադրություն, բաժանմունքի գործունեությունն ընդլայնել՝ որոշ դեպքերում ներառելով ինստիտուտների ֆինանսական՝ հարցերի լուծումը, աշխուժացնել ակադեմիայի կոորդինացիոն խորհուրդների աշխատանքները բուհերի հետ և ստեղծել «Հայ բնակչության և մշակույթի ատլաս»։

Մտքերի փոխանակությունն ամփոփեց Գ. Թ. Ղարիբջանյանը. նա նշեց, որ բաժանմունքի ինստիտուտների գիտական արտադրանքի հրատարակման գործում զգալի է գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդի և հրատարակչության կատարած աշխատանքը, միաժամանակ շեշտեց, որ անհրաժեշտ է ընդլայնել հրատարակչության տպագրական բազան։

Ժողովում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը և պատմական գիտությունների դոկտոր Ն. Ա. Թավաքալյանը։ Ս. Տ. Երեմյանի զեկուցման թեման էր «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակը», իսկ Ն. Թավաքալյանինը՝ «Ազգային հարաբերությունները զարգացած սոցիալիզմի պայմաններում»։

ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը լսեց նաև կազմակերպական հարցեր։

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 23-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը, որը բացեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը։ Նա ասաց, որ բաժանմունքը ծանր կորուստներ է կրել. վախճանվել են ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Գ. Սևակը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մ. Ս. Շահինյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Հ. Ավետիսյանը։

Գ. Բրուտյանը այնուհետև հանդես եկավ բաժանմունքի 1981 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով։ Նա նշեց, որ հաշվետու տարում բաժանմունքը և նրա ինստիտուտները զգալի աշխատանքներ են կատարել ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների կենսագործման ուղղությամբ. ինստիտուտները ՍՄԿԿ XXVI և ՀԿԿ XXVII համագումարների որոշումների լույսի ներքո վերանայել են գիտահետազոտական պլանները, կազմակերպել բազ-

մաթիվ միջոցառումներ՝ նվիրված ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումներին։ Բաժանմունքի ինստիտուտները 1981 թ. հրատարակել են 27 անուն գիրք։ Ապա զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ բաժանմունքի հիմնարկների՝ փիլիսոփայության և իրավունքի, լեզվի, գրականության, արվեստի ինստիտուտների, բաժանմունքի բյուրոյի, կոորդինացիոն գիտական խորհուրդների, բաժանմունքին առընթեր գիտական խորհուրդների, ամբիոնների գործունեությանը։ Նա խոսեց նաև ինստիտուտներում կատարված կառուցվածքային փոփոխությունների, հիմնարկների գիտական միջոցառումների, միջազգային կապերի, դասախոսական-պրոպագանդիստական աշխատանքի, պարգևատրումների մասին, նշեց ձեռք բերված զգալի հաջողությունները, տեղ գտած թերությունները, բաժանմունքի և նրա ինստիտուտների առջև ծառացած դժվարությունները՝ անելով մի շարք առաջարկություններ։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Բ. Ջանուկյանը, է. Մ. Ջրբաշյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռ. Վ. Զաբյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի 1981 թ. գործունեությունը գնահատեցին բավարար և խոսեցին ինստիտուտների նյութատեխնիկական բազայի ամրապնդման ու ընդլայնման, ինստիտուտների կարգի և գիտական կադրերի պատրաստման որակի բարձրացման, հայ դասականների երկերի հրատարակության հետ կապված դժվարությունների, հայ հին մատենագրությանը նվիրված գիտաժողով հրավիրելու մասին։

Ժողովում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Տ. Ղանալանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Ս. Արևշատյանը և բանասիրական գիտությունների դոկտոր Հ. Դ. Մուրադյանը։ Ա. Ղանալանյանի զեկուցման թեման էր «Ժողովրդական բանաստեղծության արտացոլումը Սայաթ-Նովայի երգերում»։ Ս. Արևշատյանը զեկուցեց հայոց փիլիսոփայության աղբյուրագիտության քանհինգամյա արդյունքների և առաջիկա խնդիրների, իսկ Հ. Մուրադյանը՝ բարբառագիտական ատլասի կազմման սկզբունքների մասին։

ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը լսեց նաև կազմակերպական հարցեր. բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը։

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ